«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» առարկայի
9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

2012-2013 ուս. տարվա ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Աշխարհագրություն» առարկայի ուսումնական ծրագիրը և դպրոցական դասագրքերը:

1. ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄՈՏԱՎՈՐ ՀԱՄԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/h	ԲԱԺԻՆ	Համամասնություն (%-ով)
1	Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին	3
2	Աշխարհագրական թաղանթը և նրա ոլորտային կառուցվածքը	11
3	Մայրցամաքներ և օվկիանոսներ	14
4	Աշխարհի քաղաքական քարտեզը և բնակչությունը	5
5	Համաշխարհային տնտեսություն	9
6	Տարածաշրջաններ և երկրներ	29
7	Հայաստան	29
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		100

2. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ավարտական քննական թեստը բաղկացած է 35 առաջադրանքներից:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ են 1-22-րդը: Այս առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4 տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Դրանց պատասխանելիս ընտրած պատասխանի համարը թեստում պետք է վերցնել շրջանակի մեջ, որից հետո «X» նշանով նշել պատասխանների ձևաթղթում:

Օրինակ առաջադրանք **7. Նշված երկրներից ո՞րն է գտնվում Եվրոպայում:**

1) Չինաստանը
2) Բրազիլիան
3) Ֆրանսիան
4) Ալժիրը



Օրինակ առաջադրանք **8. Ո՞ր շարքում է տրված մարզերի և մարզկենտրոնների ճիշտ համապատասխանությունը:**

1. Արագածոտն ա. Արտաշատ
2. Լոռի բ. Իջևան
3. Տավուշ գ. Աշտարակ
4. Արարատ դ. Վանաձոր

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1- դ, 2-ա, 3-բ, 3-գ

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են 23-31-րդը:

Այս առաջադրանքների բաց թողած տեղում՝ գծի վրա, պետք է գրել պատասխանը, որը կարող է լինել բառ, բառակապակցություն:

Օրինակ առաջադրանք **24. Ինչպե՞ս է կոչվում երկրի խորքից դուրս ժայթքած, ջրային գոլորշիներն ու գազերը կորցրած մագման:**

Պատասխան՝ _լավա_:

Այս տիպի առաջադրանքների պատասխանները ևս պետք է անցկացնել պատասխանների ձևաթղթի մեջ:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են 32-34-րդը:

32-րդ խնդիր-առաջադրանքի լուծման ողջ ընթացքը՝ քայլերի գրանցումով, հաշվարկներով, ստացած պատասխանով, **33-**րդ առաջադրանքի և **34**-րդ առաջադրանքի ենթահարցերի հիմնավորումները մանրամասնորեն պետք է գրել առաջադրանքից հետո բաց թողած տեղում:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 3 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի, իսկ 1-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքներների համար:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

Ընդարձակ պատասխան պահանջող 32-րդ և 33-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով: 34-րդ առաջադրանքի յուրաքանչյուր ենթահարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ՝

1. **ընտրովի պատասխանով** առաջադրանքներ՝ 22 միավոր,
2. **կարճ պատասխանով** առաջադրանքներ՝ 9 միավոր,
3. **ընդարձակ պատասխանով** առաջադրանքներ՝ 4 միավոր: